

նորդել, երբ Պրոսպայի վարժարանը կ'ըլլայի ամրան գործի օրերուն, մամայիս հետ: Կը հանէինք մեռելը, ընդհանրապէս մատաղ, մտիկ ընելով փսփսուքով պատմութիւնը, որ ջերմուկներէն կու գար: Մայիսը ամէնէն բանուկ ամիսն էր:... Բայց ամէն պրոսպայի անհաւասարելի է, երբ կը խօսի երկու բանի վրայ: Ասոնցմէ մէկը, կը հետեցնէք, ջերմուկներուն հրաշագործ յատկութեանց դիւցազներգութիւնն է, երկրորդը՝ իրենց դեղձերուն աննման, թաւշանուշ գոլորին, որ մասամբ կը ցոլանայ մարդերուն երեսներուն...: Այդ գովեստը, թէկուզ ամէնէն պարզ բերանէն, տպաւորիչ է, երբ հանքային ջուրերը կը վերածէ ուղիղ հեքիաթին Էլիֆաիին: Հոս տեղ չեմ տար պրոսպայիներուն հեշտախտաւոր նկարագրութեանց, բոլորն ալ բաղնիքներուն դիրքը յարակից տեսարանները, տաք ու պաղորակ ջուրի հարիւրաւոր ակերուն վրայ դրերու ընթացքին գոյաւոր պուրակներուն, պարտէզներուն գաղջ, հիւանդոտ, զգայութիւններով տրոփուն ու իրաւ: Թիֆլիսի մէջ այդ յեղումը գործած ըլլալու էր տպաւորութիւն, որպէսզի նաւթի իշխանին հաւանաբար բազմազբաղ աղան յօժարէր իր ցաւագար զաւակը յանձնել հնտաբոյծ Գերովբէ կաղ էֆէնտին: Ինչ ալ եղած ըլլային ազդակները իր խօթացեալ զաւակէն բաժնուիլ ուզող մարդուն, իրականը ան էր, որ պրոսպային սուտ չէր խօսած: Ջերմուկները քալեցուցած էին: Տղուն յօդերուն ներսի պատերուն դրուագուած աւագուտը, արձակած անոր անդամներուն վարանքն ու կապերը, բանալով իր շարժումներուն ազատութեան դարձող պատանին իր հարազատ կեանքին, անհոգ ու զուարթ խօլութիւններուն: Նստուկ, փափկացուած իր երկրորդ մանկութիւնը զայն ըրեր էր ներսէն տարօրէն խոր, զգայուն: Կը ճանչնար կիները՝ ձայնին մէջ կար այդ նշանը՝ ու անոնց երկար մարձումներուն հետքերը իբրեւ քաղցրութիւն արձանագրուած էին իր շարժումներուն, բառերուն, արտաքնացող հոգիին վրայ: Կ'երգէր, առաւօտէն մինչեւ մութին իջնելը, գրեթէ միա-մինակը լեցնելով ա-